

ՀԱՒԱՏԱՑՈՂԸ ԿԸ ՀՆԱԶԱՆԴԻ

Աբրահամին սրբութեան գաղտնիք չի կայանար իր կենցաղակերպին մէջ, ո՛չ ալ իր գաւակը գոհելու պատրաստակամութեան մէջ, այլ՝ իր ցուցաբերած կոյր հաւատքին եւ բացարձակ հնազանդութեան մէջ: Աստուծոյ հանդէպ հաւատք ունեցող մարդը՝ սուրբ մարդ է: Աբրահամ սրբացաւ, որովհետեւ հաւատաց ու հնազանդեցաւ: Հաւատացողը կը հնազանդի, հնազանդողը կը փորձուի, իսկ փորձուողը՝ կը սրբուի ու կը սրբացուի: Սիրելի՛ հաւատակից եղբայր եւ քոյր, գիտեմ թէ կը հաւատաս Աստուծոյ, բայց ինչպիսի՞ հաւատքով կը հաւատաս: Քեզ հնազանդութեան մղո՞ղ հաւատքով մը: Այն հաւատքը, որ չի հնազանդիր Տիրոջ, կե՛ղծ հաւատք է:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԸ

Այգիին միայն մէկ անգամ պտուղ կու տայ, իսկ Աստուածաշունչը տարուան բոլոր ամիսներուն եւ ամսուան բոլոր օրերուն պտուղ կու տայ, անդադար կերպով կենսատու Վարդապետութիւն բխեցնելով գայն ֆննողներուն: Երբ հողը կը հնձուի՝ կը սպառի, երբ պտուղը կը ֆաղուի՝ կը վերջանայ, մինչդեռ Աստուածաշունչը միշտ կը հնձուի եւ սակայն մեկնիչներ հոն միշտ կը գտնեն հասկ իրենց համար: Աստուածաշունչին այգին ամէն օր կը ֆաղուի, բայց հոն երբեք ողկոյզները չեն պակսիր: (Եբրեմ Խուրի Աստի)

ԵԹԷ ՄԵՂՔԵՐԵՂ ՍՐԲՈՒԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՍ, ԿԱՐԴԱ՝ Սաղմոս 25

Քեզի՛ կ'ուղղեն աղօթքս, Տէ՛ր: Քեզի՛ վստահած եմ, ո՛վ իմ Աստուածս, թող ամօթով չմնամ, թող թշնամիներս չխնդան իմ վրաս: Թող ամօթով չմնան բոլոր անոնք՝ որոնք քեզի կը յուսան. Աստուծմէ հեռացածները իրենք թող ամչնան, յաջողութիւն չունենան: Յայտնէ ինձի քու կամքդ, Տէ՛ր, քու ճամբաներդ սորվեցուր ինձի: Սորվեցուր ինձի եւ առաջնորդէ, որ անխախտ մնամ ճշմարտութեանդ մէջ, որովհետեւ դո՛ւն ես Աստուածս, իմ փրկիչս, եւ ես քեզի վստահած եմ տեսաբար: Տէր, Յիշէ՛ որ դուն միշտ գթած ու ողորմած եղած ես. ներէ այն մեղքերն ու յանցանքները, որ իմ մատղաշ տարիներուս գործած եմ, եւ յիշէ զիս Տէր, ողորմութեամբ, որովհետեւ բարի ես: Նայէ՛ ինձի եւ ողորմէ՛ որովհետեւ միմակ եմ եւ ես տառապեալ:

Ով Աստուած, փրկէ՛ քու ժողովորդդ իր բոլոր նեղութիւններէն: Ամէն:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԾԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak Ծրագր թերթ



ԲՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՂՅՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՂՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ , 30 ՕԳՈՍՏՈՍ 2020

ԹԻՒ 35

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 9.8-19: Բ. Կր. 1.1-11 ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.35-41

ՏՕՆ ԳԻԻՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.35-41

Նոյն օրը երեկոյեան, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եկէ՛ք լիցին միւս կողմը անցնիմք»: Աշակերտները ձգեցին ժողովուրդը եւ բարձրացան այն նաւակին մէջ, ուր Յիսուս կը գտնուէր: Հոն ուրիշ նաւակներ ալ կային:

Յանկարծ գօրաւոր հով մը փոթորկեց ծովը: Ալիքները նաւակին զարնուելով ներս կը թափէին գայն լեցնելու աստիճան, մինչ Յիսուս նաւակին յետսակողմը բարձի մը վրայ կը ֆնանար: Աշակերտները արթնցուցին զինք եւ ըսին. «Վարդապետ, հոգո՛յ՛է՞ որ մենք կը կորսուինք»:

Յիսուս ոտքի ելլելով հովուն սաստեց. «Դադրէ՛», եւ ծովուն ըսաւ. «Հանդարտէ՛»: Հովը դադրեցաւ եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց: Ապա Յիսուս դարձաւ իր աշակերտներուն. «Ինչո՞ւ այսպէս վախկոտ էք. տակաւին հաւատք չունի՞ք»: Անոնք չափազանց վախցան եւ իրարու կ'ըսէին. «Ո՞վ է արդեօք այս մարդը, որուն նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին»:

Ինչո՞ւ այսպէս վախկոտ էք. տակաւին հաւատք չունի՞ք

Խօսքը ուղղուած է աշակերտներուն, որոնք լիցին միւս կողմը անցնելու ժամանակ գօրաւոր հով մը փոթորկեց լիցը: Աշակերտները այս անակնկալին դիմաց վախցան: Անոնք բարձրաձայն դիմեցին Յիսուսին եւ Յիսուս անմիջապէս հասաւ եւ հանդարտեցուց փոթորիկը: Այսօր մեր կեանքին մէջ եւս շատ անակնկալ պահեր կ'ունենանք: Փոթորիկներ շատ են եւ ահա այսօր աւետարանը կը սորվեցնէ, թէ այդ բոլորին դիմաց պէտք չէ տկարանանք եւ յանձնուինք, այլ՝ ընդհակառակը պէտք է հաւատքով դիմակայենք բոլոր դժուարութիւնները միշտ Յիսուսին դիմելով աղօթքի նամբով: Վախը եւ յուսահատութիւնը պէտք է հեռացնենք մեր կեանքէն, որովհետեւ մենք լոյսի որդիներ ենք Քրիստոսի գաւակներ, որ միշտ պաշտպանուած ենք մեր Հօր գօրութեամբ: Հաւատքով ու աղօթքով յաղթահարենք բոլոր դժուարութիւններու:

**ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՎ ՄԱՄԱԿՆԵՐ**

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
9.8-19

Տէրը դատավճիռ արձակեց Յակոբի որդիներուն, այսինքն՝ Իսրայէլի թագաւորութեան դէմ: Այդ մասին պիտի իմանայ ամբողջ ժողովուրդը, այսինքն՝ Եփրեմը եւ Սամարիայի բնակիչները, որոնք հպարտութեամբ եւ ամբարտաւան սիրտով կ'ըսեն. «Աղիւսէ տուները փլան, ինչ փոյթ, մենք նորերը կը կանգնենք տաշուած քարերով. մայրիներ ու եղբիւններ կը կտրենք եւ աշտարակ կը շինենք մեզի համար»:

Ուստի Տէրը թշնամիներ պիտի յարուցանէ անոր դէմ, պիտի գրգռէ անոր թշնամիները, արեւելքէն՝ ասորիները եւ արեւմուտքէն՝ փղշտացիները, որոնք բաց բերանով պիտի կլլեն Իսրայէլը:

Այսքանով Տիրոջ բարկութիւնը չի ջաւ. անոր ձեռքը դեռ բարձրացած կը մնայ՝ պատժելու համար:

Որովհետեւ հակառակ իր ստացած հարուածին ժողովուրդը չզղջաց, չդարձաւ ու չփնտռեց Երկնային Զօրքերու Տէրը:

Ուստի Տէրը մէկ օրուան մէջ պիտի կտրէ Իսրայէլի գլուխն ու պոչը, մեծն ու պզտիկը:

Գլուխը՝ ծերերն ու աչքառու մարդիկն են, իսկ պոչը՝ ստուգիւն սորվեցընող մարգարէները: Առաջնորդները իրենք մոլորած՝ երանիներով մոլորեցուցին այս ժողովուրդը, որպէսզի կլլեն գայն:

Այդ պատճառով ալ Տէրը անոնց երիտասարդներուն պիտի չիմանայ: Անոնց որբերուն եւ այրիներուն պիտի չողորմի, որովհետեւ բոլորն ալ անօրէն են եւ չար, անոնց բերանները միայն անիրաւութիւն կ'արտաբերեն:

Շարունակել Աստուածաշունչէն



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
1.1-11**

Ես, Պօղոս, Աստուծոյ կամբով Յիսուս Քրիստոսի առաքեալը, եւ Տիմոթէոս՝ մեր եղբայրը, կը գրենք ձեզի՝ Կորնթոսի մէջ հաստատուած Աստուծոյ եկեղեցիին եւ ամբողջ Աբախայի մէջ գտնուող քրիստոնեաներուը: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ հայրաբար կը գթայ եւ որպէս Աստուած կը մխիթարէ ու կը զօրացնէ մեզ մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարենանք Աստուծմէ մեր վայելած օգնութիւնն ու մխիթարութիւնը տալ անոնց՝ որոնք ամէն տեսակի նեղութեանց մէջ են: Որովհետեւ, որքան շատ բաժնեկից ըլլանք Քրիստոսի չարչարանքներուն, այնքան աւելի մեծ պիտի ըլլայ իր օգնութիւնն ու մխիթարութիւնը մեզի: Մենք նեղութեանց կ'ենթարկուինք՝ ձեզի օգնելու եւ Աստուծոյ փրկութիւնը ձեզի բերելու համար. եւ եթէ Աստուած կ'օգնէ մեզի՝ կրկին ձեզի օգնելու համար է, որպէսզի մեր օրինակով սորվիք թէ Աստուած ձեզ ալ պիտի զօրացնէ՝ որ համբերութեամբ կարենաք տանիլ այն չարչարանքները, որ մենք հիմա կը կրենք:

**ՍՈՒՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ
ԳԻՏ ԳՕՏԻՈՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ**

Վատահաբար մեզմէ շատերը լսած են այս տօնին մասին: Գիւտ Գօտույ Ս. Աստուածածինի տօնը ըստ մեր եկեղեցւոյ տօնացոյցին այս տարի կը զուգարիպի Կիրակի, 31 Օգոստոսին:

Միասնաբար ծանօթանանք տօնին:

Արկաղիոս կայսրի օրով (395-408) Երուսաղէմի մէջ գտնուած Ս. Աստուածածինի գօտին յատուկ ուշադրութեամբ ու յարգանքով տարուեցաւ Պոլիս, ուր հաւատացեալները մեծ երկիւղածութեամբ առջեւէն քալեցին եւ պատուով ու յարգանքով պայն պետեղեցին եկեղեցւոյ մէջ:

Յոյները այդ առթիւ կառուցեցին նոր եկեղեցի մը եւս, կոյսին նուիրած, եւ գօտին դրին այնտեղ՝ հաւատացեալներու պաշտամունքի առարկայ դարձնելու համար եւ տօնը նշանակեցին Օգոստոս 31-ը:

Հայերու համար յետամուտ տօն է Գիւտ Գօտույ օրը: Սիմէոն կաթողիկոսը, 1774 թուականին, իր հրատարակած օրացոյցին մէջ պետեղեց Գիւտ Գօտույ տօնը եւ այնուհետեւ տօնակատարութեան մաս կապմեց:


**ՍԻՐԵԼ ԲԱՐԵԿԱՍԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ
ԳԱՌՆԱԼ ԱՆՈՐ**

Երբ հնարաւորութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտնար:

Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկո՛ւր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի:

(Առակած 3:27-28)

**ԱՍՏՈՒԱԾԱԾՐԸ ԵՒ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑԻՆ**



Հայ Եկեղեցին իր սկիզբէն իսկ յատուկ յարգանք ցուցաբերած է Աստուածամօր նկատմամբ, եւ հայրերու գրականութեան ճամբով պայն ներկայացուցած է իբրեւ «Անարատ տաճար», «Սերովբէ հողեղէն», «Մարմնատեսիլ բերովբէ»: Մեր Եկեղեցւոյ մէջ կը նշուին սուրբ Կոյսին նուիրուած եօթը տարբեր տօներ. Յղութիւն, Ծնունդ, Ընծայումն ի Տաճար, Աւետում, Վերափոխում, Գիւտ Գօտույ եւ Գիւտ տփոյ:

Իւրաքանչիւր տօն կապուած է Աստուածամօր կեանքին հետ առնչութիւն ունեցող դէպքի մը. Յղութիւնը՝ Սուրբ Հոգւոյ ներգործութեամբ, Ծնունդը՝ իբրեւ «Երկրորդ Եւա», Տաճար ընծայումը՝ իր ծնողքին՝ Յովակիմի եւ Աննայի ձեռամբ, Աւետումը՝ Գաբրիէլ Հրեշտակին կողմէ, Վերափոխումը՝ իբրեւ երկնաւոր հարս, Գօտիին գիւտը եւ Տուփին գիւտը՝ որուն մէջ իր գլխածածկոյթը կը դնէ Սուրբ Աստուածածինը:

Հինգերորդ տօնը՝ Աստուածածնայ վերափոխումը. Օգոստոս ամսուան 15-ի մերձաւոր Կիրակին նուիրուած է Աստուածամօր Վերափոխման: